

ԱԼԻՇԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ

Ստորև հրապարակվող երկու փաստաթղթերից առաջինը՝ Գարեգին Հովսեփյանի նամակ բացատրականը, կարողացել ենք գտնել Հայկ. ՄՍՀ ՊԿՊԱ Կաթողիկոսական դիվանում (ցուց. N 1-2, պահպ. միավ. N 70), իսկ երկրորդը՝ Վ. Դրագոմիրեցկու զեկուցագիրը՝ Լենինգրադի պետական կենտրոնական պատմական արխիվում (ֆ. N 776, ցուց. 2, պ. մ. 87): Երկու փաստաթղթերն էլ հրապարակվում են առաջին անգամ:

Ինչպես հայտնի է, 1901 թ. նոյեմբերի 9-ին Վենետիկում վախճանվեց Ղևոնդ Ալիշանը: Իմանալով այդ մասին՝ Թիֆլիսի հայ մտավորականները ստեղծում են «Սգո հանձնաժողով» Գ. Բարխուդարյանի նախագահությամբ (անդամներ՝ Տ. Նազարյան, Հ. Թումանյան, Աբ. Հովհաննիսյան, Ղ. Աղայան, հանձնաժողովին օգնում էր Ալ. Շիրվանզադեն), որը պետք է միջոցառումներ մշակեր հավերժացնելու հանգուցյալի հիշատակը: Ի թիվս այլ նախաձեռնումների, որոշվել էր միջնորդել Թիֆլիսի հոգևոր թեմի առաջնորդ Գարեգին Հովսեփյանին՝ քաղաքի և Սարգիս եկեղեցում կատարելու հոգեհանգիստ:

Սակայն նոյեմբերի 14-ին հանձնաժողովին հայտնի է դառնում մի զարմանալի նորություն. Գ.Հովսեփյանն արգելել էր երեկոյան ժամերգության ժամանակ, տվյալ շաբաթվա ընթացքում մահացածների անունները հիշատակելիս, հիշատակել Ղ.Ալիշանի անունը, իսկ հաջորդ օրը նա պաշտոնապես տեղեկացնում է «Սգո հանձնաժողովին», որ ինքը թույլ չի տա և. Սարգիս եկեղեցում Ալիշանի պատվին հոգեհանգիստ կատարել: Իր այս քայլը Հովսեփյանը պատճառաբանում էր նրանով, որ Ալիշանը, լինելով կաթոլիկ, չի կարող լուսավորչական եկեղեցում որևէ տիպի արարողության արժանի լինել:

Ըստ երևույթին, շատ էլ վստահ չլինելով իր որոշման ճշմարտացիությանը, Գ.Հովսեփյանը նոյեմբերի 19-ին նամակ-բացատրականով դիմում է Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանին՝ հանգամանորեն շարադրելով իր կարգադրությունը ծնող շարժառիթները, հորեյանի հարցի առթիվ ծայր առած գրական-հասարակական բախումները և միաժամանակ ներքին գաղտնի հույս ունենալով, որ Խրիմյանը կպաշտպանի իրեն: Առաջին փաստաթուղթը մեզ համար ուշագրավ է ահա այս տեսակետից:

Սակայն նոյեմբերի 23-ին ստացվում է Մկրտիչ Խրիմյանի բացասական հեռագիրը, և Ալիշանի հորեյանի՝ առանց այն էլ սրված հարցը, դուրս գալով իր սկզբնական նեղ-կրոնական սահմաններից, դառնում է առաջադիմականների ու հետադիմականների կրքոտ պայքարի առարկա: Պայքարին մասնակցում են «Մշակը», «Նոր-Դարը», «Տարազը», «Բազմավեպը» և շատ ուրիշ պարբերականներ, տպագրվում են ավելի քան հարյուր մեծ ու փոքր հոդվածներ: Հասկանալի է, որ այս ամենը չէր կարող վրիպել ցարական դրածոների ամենատես աչքերից, և ահա, նրանցից մեկը՝ Ներքին գործերի մինիստրությանը կից Կովկասի հայկական հրատարակությունների վերստուգիչ Վ. Դրագոմիրեցկին, նույն թվականի դեկտեմբերի 18-ին, շտապում է մատնագիր հիշեցնող մի զեկուցագիր ուղարկել Պետերբուրգ: Ճշտորեն տալով Ալիշանի մահվանից հետո ծայր առած դեպքերի նկարագիրը, Դրագոմիրեցկին, սակայն, անում է այնպիսի կամայական ու բռնաձիգ եզրակացություններ, որից ավելին անկարելի է երևակայել անգամ:

Ցարական պաշտոնյաների գործն ու գործունեությունը բնութագրելու տեսակետից էլ ուշագրավ է երկրորդ փաստաթուղթը:

Երկու փաստաթղթերն էլ հրապարակում ենք մեր ծանոթագրություններով:

N 1

ԹԻՖԼԻՍԻ ՀՈԳԵՎՈՐ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ Գ. ՀՈՎՍԵՓՅԱՆԻ

ՆԱՄԱԿ-ԲԱՑԱՏՐԱԿԱՆԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄՅԱՆԻՆ

19 նոյեմբեր 1901 ամի

Թիֆլիս

Առ սրբազնագույն հայրապետն և կաթողիկոսն ամենայն Հայոց Տ.Տ. Մկրտիչ

Ի մայր Աթոռն սրբոյ Էջմիածնի.

Հոգևոր Տե՛ր. հեռագրով, որպէս տեղեկություն հայտնել էի Ձերդ սրբության, որ մի քանի պարոններ դիմել էին ինձ և իրավունք էին խնդրում հանգուցյալ Ալիշանի հիշատակին հոգեհանգիստ կատարելու¹, բայց հրաժարվել էի անմիջապէս նոցա ցանկությունը կատարելուց, անպատշաճ համարելով այդ: Ես փորձել էի մի առ մի բացատրել նրանց, թէ ինչու պատշաճավոր չեմ համարում հայ գրական-գիտնական, բայց այլադավան գործչին մեր եկեղեցու մեջ հոգեհանգիստ կատարել և հորդորել էի դորա փոխարեն ներկա լինել ինձ հետ հայ-հռոմեական եկեղեցում կատարվելիք հոգեհանգստյան, ինչպէս ընդունված է բարեկիրթ հասարակությանց մեջ: Ո՛չ Եվրոպայում և ո՛չ Ռուսաստանում, ոչ կաթոլիկ, ոչ բողոքական և ոչ պրավոսլավ եկեղեցուն պատկանող հասարակությունները իրենց թույլ չէին տալ մի որևէ օտարադավան հանգուցյալի հիշատակի համար իրենց մայրենի եկեղեցում առանձին հոգեհանգիստ կատարել տալ, այլ ներկա են լինում հուղարկավորության կամ նորա հոգվո փրկության համար նշանակված հոգեհանգստին այն եկեղեցում, որին պատկանում է հանգուցյալը:

Մակայն վերջին տարիներս, ինչպէս շատ խնդիրներում, այնպէս էլ հոգեհանգիստ կատարելու հարցում, գաղափարների շփոթությամբն ամեն ինչ տակն ու վերա է դարձել: Հոգեհանգիստը, որ զուտ կրոնական մի արարողություն է, դարձել է կուսակցական ցույցերի և պայքարների ասպարեզ, որպէս եկեղեցու պաշտոնյա մեր պարտականությունն է ամեն ջանք գործ դնել, որպէսզի քրիստոնեական գաղափարներն ու մեր եկեղեցու ծեսերը ժողովրդի աչքում բարձր լինեն, որ ժողովուրդը լրջությամբ վերաբերվի, իսկ այժմ կամենում են այն գրական-գիտնական մի անձի հարգանք հայտնելու միջոց դարձնել: Ինչպէս ինձ դիմող պարոնները բացատրեցին², այնպէս էլ ամենքի համար պարզ է, որ Ալիշանի հոգու փրկության համար չեն հոգեհանգիստ կատարել տալիս. Ալիշանի մահը մենք ողբում ենք որպէս հայ գիտնականի և բանաստեղծի, և ոչ որպէս մի կաթոլիկ քահանայի. հայ կաթոլիկ քահանաները մեռնում են և մենք նրանց վերա ուշադրություն չենք դարձնում: Եթէ Ալիշանը ամենքիս համար պաշտելի է որպէս բանաստեղծ և գիտնական, եթէ

¹ Նկատի ունի նոյեմբերի 15-ին տրված իր հեռագիրը, որն ունի հետևյալ բովանդակությունը. «Просят разрешение служить панихиду Алишана. Отказал, предлагая присутствовать в армяно-католической церкви со мною».

² Ակնարկում է «Սգո հանձնաժողովի» անդամների և իր պաշտոնական հանդիպումը, որը տեղի ունեցավ նույն թվականի նոյեմբերի 15-ին և անցավ խիստ բուռն ու կրքոտ մթնոլորտում: «Երկու կողմերն» էլ բերեցին բազում փաստարկներ, ոչ մեկը փոխադարձաբար չզիջեց մյուսին և հենց այդտեղ էլ որոշվեց, որ Ալիշանի մահվան առթիվ նախորոշված հանդիսությունների և առաջին հերթին սույն հոգեհանգստի հարցը դարձնել ավելի լայն ու բազմակողմանի քննության առարկա:

մենք դաստիարակվել ենք նորա բանաստեղծություններով և շատ բան ուսել նորա գիտնական աշխատություններով, ուստի և երախտապարտ ենք դեպի նորա հիշատակը, սակայն հայտնի է, որ նույն Ալիշանը իր կրոնական-եկեղեցական գաղափարներով հակառակ էր Հայաստանյայց եկեղեցու անկախության և բազմիցս յուր երկերի մեջ այն գաղափարն է շեշտում, որ Հայաստանյայց աթոռը պետք է ենթարկվի «Վեհագոյն գահին Հռովմայ» և եթե այսօր այդպես չէ, հետեալ է նա ընդդեմ գլխավոր առաքելույն Պետրոսի: Ես, որպես Հայաստանյայց եկեղեցու սպասավոր, ինչպե՞ս մոռանամ այս հանգամանքը. չէ՞ որ հոգեհանգիստը զուտ կրոնական արարողություն է և ոչ գրական անձին հարգանք մատուցանելու, ցույցեր անելու մի միջոց: Քրիստոնյա եկեղեցին աղոթում է թագավորների համար, որ աստված նրանց սիրտը քաղցրացնե իրենց հպատակների վրա, մենք կարող ենք աղոթել տաճկաց սուլթանի համար, որ աստված իր գրության ճառագայթներն ուղղե դեպի նորա սիրտը, որպեսզի նա զգա, որ մի տարաբաղ ժողովուրդ չպետք է սրի և անիրավության գոհ դարձնե, իսկ ի՞նչ միտումով պետք է Ալիշանի համար մեր եկեղեցին հոգեհանգիստ կատարե, արդյո՞ք նորա համար, որ նա մեղք է գործել մեր եկեղեցու դեմ, մաքառելով մեր եկեղեցու անկախության դեմ և աշխատել է ներշնչել այն միտքը, թե պետք է հնազանդվել պապի գերագոյն իշխանության և անսխալականության: Չէ՞ որ այս պարսավանք կլինեք նրա հիշատակի դեմ: Մեր փրկիչը մաքառել է փարիսեցիության դեմ, հոգեհանգիստը նոր փարիսեցիություն չէ՞ այն անձնավորությունների կողմից, որոնք իրենց բերանով խոստովանում են, թե կրոնական միտումներով չեն կատարել տալիս: Ուրիշ բան կլինեք, եթե Ալիշանը Հայաստանյայց եկեղեցու հոտին պատկաներ, մենք պարտավոր էինք մեր եկեղեցու ծիսակատարությունը կատարել, աշխատելով հետզհետե ժողովրդի մեջ այն գաղափարները զարթնեցնել, թե արտաքին ծեսի համապատասխան ներքին, կրոնական զգացում պետք է ունենանք, ինչպես եկեղեցու պաշտոնյայի պարտքն է թելադրում:

Ալիշանին մենք երախտապարտ ենք նորա գրական-գիտնական վաստակների համար, մեր երախտագիտությունները հայտնենք այն ձևով, որ ամեն տեղ ընդունված է, այսինքն՝ գրական-գիտնական երեկույթ կազմելով, լրագրության մեջ հոդվածներ գրելով, նորա հիշատակին նվիրված գրական-գիտնական ժողովածու հրատարակելով, նորա հիշատակին նվիրված մի աստվածահաճո հաստատություն՝ որբանոց կամ գրական մրցանակաբաշխություն հաստատելով և այլն: Այսպես մտածելով չեմ խրախուսել ինձ դիմողներին և առանց Ձերդ սրբության կարգադրության իրավունք չեմ համարել ինքնագլուխ կարգադրություններ անելու: Հ. Ալիշանին հոգեհանգստով հարգել կամեցողները իրապես խուսափում են գրական գործից, նյութական զոհաբերություններից և մտավոր աշխատանքից և թեթևամտաբար եկեղեցական սրբազան արարողությունը անարժեք և տղայական ցույցի միջոց դարձնում:

Մոտավորապես այս իմաստով և իհարկե պատշաճ լեզվով խոսել էի ինձ դիմող պարոններին և հորդորել՝ մյուսներին ևս համոզելու, որ ավելի վայելուչ ձևով հայտնեն իրենց հարգանքը, խնայելով մեր եկեղեցու պատիվը: Ինձ դիմող պատգամավորները գոհ մնալով առաջ բերած պատճառաբանություններովս, փորձել էին իրենց ընկերներին ևս համոզել: Ամսույս 17-ին գումարված գրագետների և գրասերների ժողովը³ միայն երկու ձայնից առավելությամբ որոշել էր իմ միջոցով դիմել Ձերդ սրբության, որ **եթե կարելի է**⁴ հրաման տաք հոգեհանգիստ կատարելու

³ Նոյեմբերի 17-ին Թիֆլիսում, Գ.Բարխուդարյանի նախագահությամբ, տեղի ունեցավ թիֆլիսահայ գրական-մշակութային գործիչների ընդհանուր ժողովը, որտեղ քննության առարկա դարձավ նաև «հոգեհանգստի» հարցը: Բանավեճը սրվեց և, ի վերջո, որոշվեց վերջնական լուծման համար հարցը հասցնել Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Նրիմյանին:

⁴ Ընդգծումը Գարեգին Հովսեփյանինն է:

հայոց եկեղեցում: «Մշակի» բարբաջանքներին շատ հետևողներ չկան⁵, նոր Աստուծով շուտով ցաք ու ցրիվ կլինի, ինչպես լուր է պտտվում քաղաքում. հետզհետե երիտասարդության մեջ լրջմտության մի հոսանք է նկատվում, և այդ հանգամանքը շատ նկատելի է հենց ներկա խնդրում: Նոքա նախ՝ Ձերդ սրբության դիմում են իմ միջնորդությամբ, հետևելով կարգապահության և պատշաճավորության կանոններին և երկրորդ՝ շատ էլ չեն պնդում, թե անհրաժեշտ է անպատճառ հոգեհանգիստ կատարել: Իսկ հասարակության լուրջ մասը, պ[արոն] Աբգար Հովհաննիսյան և այլք, շատ գոհ են իմ բռնած ընթացքից. հենց երեկ երեկոյան պ[արոն] Աբգարը մի քանի գրագետ պարոններով ինձ մոտ էր և անձամբ գոհություն հայտնեց այդ մասին: Այս ամենի մասին զեկուցանելով Ձերդ սրբության, ակնածությամբ սպասում են Ձեր բարեհաճ կարգադրության. իսկ եթե Ձեր հոգևոր տերությունը ներողամիտ կլինի թույլ տալու հայտնելու, նվաստությանս կարծիքն այն է, որ պետք է հրաման տալ, որպեսզի միանգամից վերանան այն տգեղ սովորություններն ու նորամուծությունները, որով եկեղեցական սրբազան արարողությունները թեթևամիտ և ոչ մի նշանակություն չունեցող ցույցերի ասպարեզ են դարձնում: Ավելի մանրամասնություններ կհայտնե տեր Եզնիկ վարդապետը, որի ձեռքով ուղարկում եմ սույն նամակը:

Հոգևոր տերությանդ խոնարհ ծառա և որդի

Գարեգին վարդապետ Հովսեփյան

Բանբեր Հայաստանի արխիվների

1973, N1, հունվար

⁵ Նկատի ունի «Մշակի» N 255-ում (նոյեմբերի 16) հրատարակված «Վերադարձ դեպի միջին դարերը» խորագիրը կրող հոդվածը, որտեղ կրքոտ կերպով դատապարտվում է հայ եկեղեցու պահպանողականությունը, իսկ Գարեգին Հովսեփյանը որակվում է որպես «Հայաստանյայց ցիլինդրավոր տիրացու», «Չարիք հայերի համար»: